

օրը, մեռելոց հանգստութեան համար կ'աղօթեն եւ կը մերժեն քաւարանը»:

«Ոչ մէկ ժողով ուղղափառ կը նկատեն, բացի սկիզբի երեքէն»:

«Անոնք Մովսիսական օրինաց դանազան ծէսերը կը պահեն, օրինակ՝ մատաղը՝ Մովսիսական օրէնքով հրամայուած մասերը զոհարարին տալով, որ ընդհանրապէս իրենց պատրիարքն է, եւ նախ քան մատաղցուին սպանութիւնը անոր կլլել կուտան քիչ մը օրհնեալ աղ»:

«Եկեղեցիներուն մէջ հրապարակաւ եւ բարձրաձայն ինքզինքնին կ'այսպանեն իրենց մեծադոյն մեղքերուն համար, ու իրենց քահանաները նոյնպէս հրապարակաւ սրբազան քառութիւն կուտան»<sup>41)</sup>:

Այս յուշագրին որոշ մասերը ազգադրական արժէք ունին մեղի համար: Իսկ թովմաս առաքեալի կողմէ Յիսուսի, իբր թէ համբառնալէն յետոյ վերստին աշխարհ գալէ վերջ, կանխիկ դրամով Հընդիկներուն ծախուիլը, եթէ չարամիտ ամբաստանութիւն մը չէ զուտ յերիւրածոյ, թէեւ հետաքրքրական պարսկահայ հէքիաթ մըն է: Անտարակոյս, նպատակն է ցոյց տալ թովմասի անհաւատութիւնը, մինչեւ իսկ Յիսուսը ծախելու աստիճան:

#### ՀԻՆԳԵՐՈՐԳՎ ԱԻՆԵՐԱԳԻՐ

Լատինահայ ծիսակատարութեան մասին յուշագիր մըն է ասիկա.—

«Սուրբ Մարիամ Եղիպտացոյ նուիրագործման օրը, Ապրիլ 19, իր տօնը կը կատարուի ըստ հայ ծէսի եւ հայ լեզուով: (Հայերը սիւրբական լեզուով կ'երգեն, իրենց համար ամենաբնականը ըլլալով: Թոյլատրուած են իրենց բոլոր հին ծէսերը պահել, այսինքն՝ անոնք որ հակառակ չեն հռոմէական կաթոլիկ վարդապետութեան): Այս եկեղեցւոյն կից վանքին պատը, նաեւ Պիղատոսի տան պատը, որ նախորդին դիմաց կը գտնուի, զարդարուած է գորգերով՝ սուրբին մեծ պա-

տիւ ընելու համար: Եկեղեցւոյն մուտքին իւրաքանչիւր կողմը կան քանի մը ընտիր նկարներ, սուրբին կեանքը ներկայացնող, անոր սուրբ գերեզմանը այցելելէն մինչեւ իր մահը Եղիպտական անապատին մէջ: Իւրաքանչիւր նկարի տակ կախուած է պատկերին մանրամասն բացատրութիւնը տուող խաւաքարտ մը, օրինակ՝ անոր սուրբ գերեզմանէն վտարումը իր այցելութեան ատեն հրեշտակի մը կողմէ, մինչեւ որ ան իր մեղքերուն համար զղջացած է, անոր ողորմութիւն ստանալը թուրք փաշայէ մը, որուն շնորհիւ ան գնած է երկու նկանակ, որոնցմով սնած է քառասուն տարի, անոր գտնուիլը անապատին մէջ Չոսիմոս քահանայէն, անոր Յորդանան գետին վրայէն քալելը՝ առանց ոտքերը թրջելու, եւ անոր նոյն անապատին մէջ նոյն վանահօր կողմէ մեռած գտնուիլը, եւն.: Եկեղեցւոյն ներքին կողմը զարդարուած է կարմիր տամակով: Պորանը բարձր պճնուած է արծաթ արձաններով, երկու ոտք բարձրութեամբ խաչելութեամբ մը, վեց արծաթ մոմկալներով եւ չորս ուրիշ մոմկալներով, զարձեալ արծաթ: Դրան վրայ վերնատուն մը կայ, ուր հայ վաճառականներուն կիներն ու աղջիկները եւն. կը նստին, ըստ արեւելեան սովորութեան, որ երկու սեռերը կը բաժնէ եկեղեցւոյն մէջ: Ատոր վրայ նկար մը կախուած է այդ ազգին պաշտպան կարգինալին: Սուրբ արարողութիւնները ընդհանրապէս կը պաշտօնակատարուին հայ եպիսկոպոսէ մը, որ նախ՝ պահարանին մէջ կը զգեստաւորուի իր սրբազան հանդերձներով եւ թափօրով կը յառաջանայ անկէ իր բոլոր կղերով դէպի եկեղեցի, նախ վանքին բակին մէջէն կ'երթայ, անկէ եկեղեցւոյն բակէն դէպի խորան: Թափօրին գլուխը կը գտնուի երկու արծաթ մոմկալներու միջեւ խաչ մը, յետոյ կուզան խնկարկուն, եկեղեցականները զոյգ զոյգ: Ասկէ վերջ կուգայ գեոատի դպիր մը, տեսակ մը արոյրէ գանդակ բռնած, յետոյ երկու ուրիշ դպիրներ՝ նոյնպէս արոյրէ անօթ-

41) Անդ՝ էջ 413: